

«Արդշինհիմնվեստբանկ»

Փակ բաժնետիրական ընկերություն

Անկախ աուդիտորի հաշվետվություն

Ֆինանսական հաշվետվություններ
2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համար

Բանկի ղեկավարության կազմը.....	3
Բանկի ղեկավարության պատասխանատվությունը.....	4
Անկախ աուդիտորի հաշվետվությունը.....	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Հաշվապահական հաշվեկշիռ	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	10

Բանկի ղեկավարության կազմը

Տվյալ ֆինանսական հաշվետվությունների ստորագրման պահին Բանկի ղեկավարության կազմը հետևյալն էր.

Բանկի խորհուրդ

Կարեն Սաֆարյան
Խաչատուր Զաքարյան
Արամ Անդրեասյան
Ռուդիկ Սկրտունյան

Բանկի խորհրդի նախագահ
Խորհրդի անդամ
Խորհրդի անդամ
Խորհրդի անդամ

Գործադիր մարմին

Արամ Անդրեասյան
Օլգա Գասպարյան
Սերգեյ Վիրաբյան
Գուրգեն Հարությունյան
Ալեքսանդր Պախոմով
Մանվել Սահակյան
Կարեն Զանինյան
Կարեն Բոգոյան

Վարչության նախագահ
Վարչության նախագահի տեղակալ
Վարչության նախագահի տեղակալ
Վարչության նախագահի տեղակալ
Վարչության նախագահի տեղակալ
Գլխավոր հաշվապահ
Վարչության պետ
Վարչության պետ

Բանկի ղեկավարության պատասխանատվությունը

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ նպատակով նրանցից պահանջվում է.

- ընտրել հաշվապահական հաշվառման քաղաքականություն և հետևողականորեն կիրառել այն,
- կատարել հիմնավորված գնահատումներ,
- պատրաստել ֆինանսական հաշվետվությունները Բանկի գործունեության անընդհատության հիման վրա, եթե Բանկի ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու Բանկը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար, որոնք արժանահավատորեն ներկայացնում են Բանկի ֆինանսական վիճակը: Նրանք պատասխանատու են միջոցներ ձեռնարկել Բանկի ակտիվների ապահովման, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ:

Երևան
01 փետրվարի 2006թ.

Արամ Անդրեասյան

Մանվել Սահակյան

Վարչության նախագահ

Գլխավոր հաշվապահ

Անկախ աուդիտորի հաշվետվությունը

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար, կցված 6-ից 37 էջերում, պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: 08 փետրվարի 2005թ. աուդիտորի հաշվետվությամբ մենք արտահայտել ենք առանց վերապահումների դրական կարծիք Բանկի՝ 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

Երևան, 01 փետրվարի 2006թ.

Գրանք Թորնթոն Ամիո ՍՊԸ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

*2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ*

	Ծանոթ.	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
Տոկոսային եկամուտներ	4	4,566,733	3,334,670
Տոկոսային ծախսեր	4	(1,324,629)	(884,382)
Չուտ տոկոսային եկամուտներ		3,242,104	2,450,288
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	1,714,658	1,260,236
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(21,483)	(14,385)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		1,693,175	1,245,851
Արտարժութային գործառնություններից և վերագնահատումից զուտ եկամուտ		1,087,278	636,933
Արժեթղթերում ներդրումներից զուտ եկամուտ		71,887	1,312
Այլ գործառնական եկամուտ	6	113,596	804,664
Մասհանումներ հնարավոր կորուստների պահուստներից	7	(42,911)	(154,070)
Այլ գործառնական ծախսեր	8	(3,282,392)	(2,695,517)
Շահույթ մինչև հարկումը		2,882,737	2,289,461
Շահութահարկի գծով ծախս	20	(648,366)	(495,377)
Տարվա շահույթ		2,234,371	1,794,084

10-ից 37 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հաշվապահական հաշվեկշիռ

**2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հազ. ՀՀ դրամ**

	Ծանոթ.	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	9	11,994,517	7,416,126
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10	3,470,951	5,746,198
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	11	24,589,244	18,545,410
Ներդրումներ արժեթղթերում			
- վաճառքի համար մատչելի	12.1	8,474,117	12,255
- մինչև մարման ժամկետը պահվող	12.2	-	2,576,495
Հիմնական միջոցներ	13	4,859,295	3,019,609
Ոչ նյութական ակտիվներ	14	103,713	107,058
Հետաձգված հարկային ակտիվ	20	-	14,347
Այլ ակտիվներ	15	317,674	226,065
Ընդամենը ակտիվներ		53,809,511	37,663,563
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	286,673	1,650,435
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	17	43,724,521	30,065,192
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		249,982	338,029
Հետաձգված հարկային պարտավորություն	20	332,027	-
Այլ պարտավորություններ	18	206,375	214,696
Ընդամենը պարտավորություններ		44,799,578	32,268,352
Բաժնետիրական կապիտալ	19	3,020,024	2,946,250
Գլխավոր պահուստ		248,891	70,051
Վերագնահատման պահուստներ		1,306,577	-
Զբաղիված շահույթ		4,434,441	2,378,910
Ընդամենը կապիտալ		9,009,933	5,395,211
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		53,809,511	37,663,563

10-ից 37 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Բանկի վարչության կողմից 2006թ. փետրվարի 1-ին և ստորագրվել են Բանկի վարչության նախագահի և գլխավոր հաշվապահի կողմից:

Արամ Անդրեասյան

Մանվել Սահակյան

Վարչության նախագահ

Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնաց. առ 01 հունվարի 2004թ. (ստուգված)	2,946,250	-	-	-	654,877	3,601,127
Տարվա շահույթ	-	-	-	-	1,794,084	1,794,084
Հատկացումներ պահուստներին	-	70,051	-	-	(70,051)	-
Մնաց. 31 դեկ. 2004թ. դրությամբ (ստուգված)	2,946,250	70,051	-	-	2,378,910	5,395,211
Բաժնետոմսերի թողարկում	73,774	-	-	-	-	73,774
Տարվա շահույթ	-	-	-	-	2,234,371	2,234,371
Մասհանումներ պահուստին	-	178,840	-	-	(178,840)	-
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	1,527,962	-	1,527,962
Իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ	-	-	105,260	-	-	105,260
Հետաձգված հարկի ազդեցություն	-	-	(21,052)	(305,593)	-	(326,645)
Մնաց. 31 դեկ. 2005թ. դրությամբ (ստուգված)	3,020,024	248,891	84,208	1,222,369	4,434,441	9,009,933

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

*2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ*

	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
<u>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</u>		
Ստացված տոկոսներ	4,503,346	2,984,463
Վճարված տոկոսներ	(1,234,405)	(769,839)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	129,734	85,484
Զուտ հոսքեր արտարժույթային գործառնությունների գծով	1,224,916	736,001
Ստացված զուտ կոմիսիսոն գումարներ	1,754,322	1,245,851
Այլ ակտիվների վերականգնում	-	630,951
Այլ եկամուտներ	5,885	310,384
Այլ ծախսեր	(1,716,875)	(484,827)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(1,396,372)	(1,039,765)
Վճարված շահութահարկ	(378,654)	(219,050)
<u>Զուտ դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները (Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</u>	2,891,897	3,479,653
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	(173,205)	(1,098,986)
Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ	(34,659)	(345,000)
Վարկեր և ավանդներ բանկերում	299,783	34,659
Հաճախորդներին տրված վարկեր	(6,722,540)	(7,445,790)
Այլ ակտիվներ	(51,899)	(523,377)
<u>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</u>		
Ռեպո համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	(999,441)	999,441
Բանկերից և ֆինանսական կազմակերպությունների ավանդներ	123,079	(162,980)
Հաճախորդների ավանդներ	13,676,766	12,947,685
Այլ պարտավորություններ	(96,813)	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	8,912,968	7,885,305
<u>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</u>		
Ներդրումային արժեթղթերի առք	(5,800,471)	(871,244)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների առք	(672,924)	(1,617,888)
Այլ գործառնություններ	(29,646)	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(6,503,041)	(2,489,132)
<u>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</u>		
Վարկեր բանկերից և այլ ֆինանս. կազմակերպություններից	(488,750)	270,210
Բաժնետիրական կապիտալի թողարկում	73,774	-
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(414,976)	270,210
Արտարժույթի փոխանաման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(137,638)	(99,068)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	1,857,313	5,567,315
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	11,512,136	5,944,821
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (Ծանոթ. 9)	13,369,449	11,512,136

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեությունը

«Արդշինիվեստբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2003թ. մարտ ամսին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2003 թվականի փետրվարի 25-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 83 արտոնագրային համարով:

2003թ. ապրիլի 2-ից 2003թ. մայիսի 22-ն ընկած ժամանակահատվածում Բանկը ձեռք է բերել «Արդշինբանկ» ԲԲԸ-ի գործառնությունները:

2003թ. նոյեմբերի 6-ից 2003թ. դեկտեմբերի 11-ն ընկած ժամանակահատվածում Բանկը ձեռք է բերել «Հայագրբանկ» ԲԲԸ-ի գործառնությունները:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ թվով 51 մասնաճյուղեր գտնվում են ՀՀ տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչի 13/1:

Աշխատողների միջին թվաքանակը տարվա ընթացքում կազմել է 1002 մարդ (2004թ.՝ 877):

2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումները ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Բանկը վարում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ ՀՀ դրամ), իսկ կարգավորող մարմիններին ներկայացնելու նպատակով իր հաշվետվությունները պատրաստում է ՀՀ գործող օրենսդրության և Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՆՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով, բացի շենքերից, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը տնօրեններից պահանջում է կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին, որոնք բացահայտված են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան ծանոթագրություններում: Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ: Հետևաբար, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Չաշխատող վարկերի և փոխառությունների գծով, երբ դրանց մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով կիրառելով գործարքի օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են կիրառելով ՀՀ ԿԲ կողմից հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքը, որը 2005թ-ի դեկտեմբերի 31-ին կազմել է 450.19 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2004թ՝ 485.84 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց): Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության արտարժույթային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ հոդվածում:

Հարկեր

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Բանկը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք;

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ;
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրությունում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ Ար-Բա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոզիտացված գումարների) և այլ բանկերում ընթացիկ հաշիվներից (բացառությամբ այն գումարների, որոնց օգտագործման հնարավորությունը սահմանափակ է):

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Ֆինանսական գործիքների ճանաչում

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները: Նշված հոդվածների գծով հետագա վերաչափումների հետ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նկարագրված է համապատասխան ծանոթագրություններում:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված զնահատումների հիման վրա:

- *Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահից:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- Վաճառքի համար մատչելի

Վաճառքի համար մատչելի ներդրումները այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հետագայում հաշվառվում են իրական արժեքով: Ֆինանսական արդյունքներով ճշգրտված՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք առաջանում են: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը: Վաճառքի համար մատչելի կապիտալ գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքի որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

- Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված մարման ժամկետով հաճախորդներին տրված վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

- Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող էական գումարի ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքներով ճշգրտված՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների, որոնք ներառում են նաև առևտրական նպատակով պահվող պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտված՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հետզման պայմանագրեր

Հետզման պայմանագրերը Բանկի կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված գործարքները դիտվում են որպես արժեթղթերի ապահովվածությամբ միջոցների տրամադրում:

Հետզման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող, վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետզման պայմանագրով ձեռքբերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հողվածներում:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետզման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է թե արդյոք առկա են օբյեկտիվ փաստեր, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է լինել արժեզրկված: Ցանկացած նման հայտանիշների առկայության դեպքում ամորտիզացված կամ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է հետևյալ կերպ.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (ներառյալ երաշխիքների իրագործումից և գրավների իրացումից փոխհատուցվող գումարները) ներկա արժեքի միջև տարբերություն:

Հատուկ պահուստը ձևավորվում է ռիսկային ակտիվների մանրամասն գնահատման արդյունքում: Ի լրումն, ընդհանուր պահուստի գումարները ձևավորվում են այն ռիսկերի նվազեցման նպատակով, որոնք թեև հատուկ ձևով բացահայտված չեն, սակայն գոյություն ունեն բանկային ակտիվների ցանկացած պորտֆելում: Գեկավարության կողմից պահուստի գումարի գնահատումը կատարվում է ելնելով անցյալում կորուստներ ունենալու Բանկի փորձից,

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

պորտֆելին ներհատուկ և նրանում գոյություն ունեցող ռիսկերից, բացասական բնույթի իրավիճակներից, որոնք կարող են ազդեցություն թողնել վարկը մարելու վարկառուի հնարավորությունների վրա, ինչպես նաև ապատվածություն հանդիսացող գրավի գնահատված արժեքից և ընթացիկ տնտեսական պայմաններից:

Վարկերի հնարավոր կորուստների գումարի գնահատումը նախատեսում է որոշակի դատողություններ: Այն դեպքում, երբ հնարավոր է դառնում, որ Բանկը կոնկրետ ժամանակաշրջանում կարող է ունենալ որոշակի կորուստներ, որոնք հիմք են հանդիսանում պահուստի ձևավորման համար, վարկային պորտֆելին բնորոշ վնասները հատուցելու համար բավականաչափ պահուստի գումարի որոշումը իրականացվում է դեկավարության կողմից կատարվող համապատասխան դատողությունների հիման վրա:

Վարկերի կորուստների գծով պահուստի գումարի ընդհանուր փոփոխությունը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Եթե պահուստին հատկացումներ կատարելուց հետո տեղի ունեցող դեպքերի արդյունքում պարզ է դառնում, որ հնարավոր կորուստի գումարը փոքրանում է, ապա համապատասխան պահուստի հակադարձման գումարը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

- Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ

Եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով վնասը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում և առկա է օբյեկտիվ վկայություն, որ ակտիվն արժեզրկված է, ապա կուտակված գուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, նույնիսկ երբ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված ամորտիզացիայի տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրից և արտոնագրերից, որոնք հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով և ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ դրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, ինչը չի գերազանցում 10 տարին:

Այն ծախսումները, որոնք բարձրացնում կամ երկարացնում են համակարգչային ծրագրերի արդյունավետությունն ու շահագործումը՝ դրանց սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշներից, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ծրագրի սկզբնական արժեքին: Այս ծախսումները ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Գույվիլ

Ձեռքբերումների հետևանքով առաջացող գույվիլն իրենից ներկայացնում է ձեռք բերման արժեքի այն մասը, որը գերազանցում է ձեռք բերված գուտ որոշելի ակտիվների իրական արժեքը: Գույվիլը չի ամորտիզացվում, փոխարենն այն առնվազն տարին մեկ անգամ ստուգվում է արժեզրկման գծով:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացառությամբ շենքերի, որոնք ներկայացված են վերագնահատված արժեքով: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	20	5
Համակարգիչներ և կապի միջոցներ	1	100
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալական պայմանագրի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական, որ դրանց շնորհիվ սպազա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասին վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով հնարավոր կորուստների պահուստի ստեղծման ընթացակարգը համապատասխանում է հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ընթացակարգին, որը նկարագրված է «Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ» բաժնում:

Համադրելի տեղեկատվություն

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

4. Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներ	2005թ.	2004թ.
Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում	215,404	71,856
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	4,134,614	3,052,115
Ներդրումներ	185,662	194,872
Հետգնման պայմանագրեր	30,604	15,446
Այլ տոկոսային եկամուտ	449	381
	4,566,733	3,334,670

Տոկոսային ծախսեր

Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	4,029	14,899
Հաճախորդների ժամկետային ավանդներ և ընթացիկ հաշիվներ	1,317,402	864,331
Հետգնման պայմանագրեր	3,198	5,152
	1,324,629	884,382

5. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

	2005թ.	2004թ.
Վճարներ փոխանցումներից	281,868	247,338
Կոմիսիոն վճարներ կանխիկացման գծով	969,381	793,312
Պետական և տեղական բյուջեի հետ հաշիվների սպասարկման գծով վճարներ	37,648	27,371
Վճարային քարտերով գործարքներ	24,520	9,710
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	401,241	182,505
	1,714,658	1,260,236

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

6. Այլ գործառնական եկամուտ

	2005թ.	2004թ.
Այլ ակտիվների վերականգնում	94	630,951
Ստացված տույժեր	18,932	21,373
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս)	(109)	69,003
Այլ եկամուտ	94,679	83,337
	113,596	804,664

7. Հնարավոր կորուստների պահուստներ

	Ծանոթ.	2005թ.	2004թ.
<u>Քանկերում տեղաբաշխված ավանդների և քրթակցային հաշիվների գծով</u>			
Սկզբնական մնացորդ		52,831	12,125
Մասհանում/(փոխհատուցում) պահուստին		(19,744)	40,706
Վերջնական մնացորդ	9; 10	33,087	52,831
<u>Հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների գծով</u>			
Սկզբնական մնացորդ		234,207	151,878
Մասհանում պահուստին		61,863	124,497
Նախկինում դուրս գրված գումարների վերադարձ		121,192	74,675
Պահուստի օգտագործում		(126,179)	(116,843)
Վերջնական մնացորդ	11	291,083	234,207
<u>Այլ ակտիվների գծով</u>			
Սկզբնական մնացորդ		2,447	6,459
Մասհանում/(փոխհատուցում) պահուստին		23,565	(12,830)
Նախկինում դուրս գրված գումարների վերադարձ		7,669	10,616
Պահուստի օգտագործում		(30,302)	(1,798)
Վերջնական մնացորդ	15	3,379	2,447
<u>Հետհաշվեկշռային հոդվածների գծով</u>			
Սկզբնական մնացորդ		22,773	21,057
Մասհանում/(փոխհատուցում) պահուստին		(22,773)	1,697
Ճշգրտում		-	19
Վերջնական մնացորդ	21.2	-	22,773
Ընդամենը մասհանումներ		42,911	154,070

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

8. Այլ գործառնական ծախսեր

	2005թ.	2004թ.
Անճնակազմի գծով ծախսեր	1,389,206	1,065,792
Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին	165,636	134,857
Մաշվածություն և ամորտիզացիա	392,001	256,780
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	102,720	100,507
Գործուղման ծախսեր	40,078	21,575
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	114,187	115,052
Նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	50,044	33,732
Հիմնական միջոցների արժեզրկումից վնաս	503	-
Գրասենյակային ծախսեր	29,402	15,942
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	144,514	194,142
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	206,636	188,622
Անվտանգության գծով ծախսեր	103,373	85,547
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	135,348	163,670
Վճարված տուգանքներ	537	5,751
Այլ ծախսեր	408,207	313,548
	3,282,392	2,695,517

9. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

	2005թ.	2004թ.
Կանխիկ դրամական միջոցներ	4,477,770	3,085,890
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումներ	68,417	34,514
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	6,124,192	3,143,168
Ներառվում է դրամական հոսքերի մասին հաշվետվությունում	10,670,379	6,263,572
Դրամական միջոցների այլ տեղաբաշխումների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(684)	(345)
Ավանդային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	1,000,000	1,000,000
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	324,767	151,562
Հաշվեգրված տոկոսներ	55	1,337
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	11,994,517	7,416,126
Կանխիկ դրամական միջոցներ և թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	10,670,379	6,263,572
